Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899 — ԹԻՒ 162

R. P. Kalémkarian
Mel'nitsa'ustanogasse W. 4
Wien
(Autriche)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Միջասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Տրանուրդման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տեսակ եւ դրամ դրկել
Խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեկ տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ԱԶԴ

—

Յառաջիկայ սեպտ. 19ին նոր Թաղ. խորհրդի մը ընտրութեան պիտի ձեռնարկուի Սահմանադրութեան օրէնքի համաձայն, ուստի այս տաթիւ թախանձագին կը խնդրեմ արդոյ հասարակութենէն որ բարեհաճին աղգասիրաբար Ս. Պատարագի աւարտումէն քիչ ետք, նոյն օրը Ազգ. վարժարան գալ։

Ամէն անոնք որ ընտրելու իրաւունք ունին՝ կը սիրեմ յուսալ որ ներկայս իբր հրաւիրագիր համարելով, փութան հանդէպ աղգին ունեցած պարտքերնին յիշեալ օրը խղճի մտօք կատարելու։

Մնամ աղօթարար
Տէր Մարտիրոս Մարտիրոսեան
Վառնա, 9 Սեպտեմբեր

ԳՈՒՑԷ ԼԱՒ ԴԵՐ Է ԽԱՂՈՒՄ

—

Թանը հաղորդում է թէ՝ Օրմանեան Սուլթանին առաջարկել է իր պահանջներին բաւականութիւն տալ հայ ժողովրդի անտանելի վիճակը թեթեւացնելու համար, ապա թէ ոչ թէ ինքը և թէ Ազգային ժողովը ստիպված պէտք է լինեն հրաժարվել։

Անցեալ օր մեր Պոլսոյ Թղթակից «Մժղուկ»ը յիշել էր այդ հրաժարականի խնդիրը, բայց հնարովի, չինծու էր համարում, մի գլինբաղութիւն Օրմանեանի կողմից, իսկ այսօր «Բաժ»ը, հաստատում է հրաժարականի խնդիրը, բայց և այնպէս կասկածում է թէ Օրմանեան մաքուր դիտումներով այդ քայլը արած լինի։

* * *

Այսպէս թէ այնպէս հրաժարականի խնդիրը գոյութիւն ունի։ Արտասահմանի հայութեան բողոքը զուր չանցաւ. Օրմանեան զգաց որ եթէ Սուլթանի զահի տակ ճնշվող հայերը չեն կարողանում իր դէմ դժգոհութիւն յայտնել, այդ չէ նշանակում թէ ինքը ազատ, համարձակ կարող է հայրենիքի և ազգի շահերը ոտքի տակ տալ և հայ ժողովրդի անունով լիղել Փատիշահի այն ձեռքերը, որոնց մի շարժումով տասնեակ հազարներով հայկական գլուխներ են թռել...

Արդեօ՞ք Օրմանեան հիմա գերասանութիւն է անում, թէ իսկապէս փոխել է իր քաղաքականութիւնը և որոշել թէ Սուլթանի և թէ Եւրոպայի առաջ հայ ժողովրդի արդար պահանջների արձագանքը դառնալ։

Որ Օրմանեան գերասան է, վեղարաւոր գերասան, այդ մենք վաղուց գիտենք. բայց ինչո՞ւ չը մտածել որ իբր լաւ գերասան յանկարծ գայ և այս անգամ մի լաւ դեր կատարէ հայ կեանքի մէջ։ Սատանան ամեն տեսակ կատակ կարող է անել՝ ասում է առածը. Օրմանեան ինչո՞ւ չի կարող այդպիսի մի լաւ կատակ անել։

* * *

Այսուամենայնիւ Պատրիարք Օրմանեան՝ թո՛ղ չը մոռանայ որ լոկ հրաժարվելով նա չը պէտք է կարողանայ իր ընկած վարկը բարձրացնել։ Նա պէտք է ուղղէ իր մինչեւ հիմա արած սխալները, եթէ իսկապէս նրա սրտի խորքերում դեռ գոյութիւն ունի հայրենիքի և հարազատ ժողովրդի սէր կոչված զգացմունքը։ Նրա այդ սխալները միայն մի կերպ կարելի է մեղմացնել. այն է ժողովրդի անտանելի վիճակի մանրամասն տեղեկագիրը ամենաորոշ և կտրուկ կերպով ներկայացնելով Սուլթանին, և Եւրոպական պետութիւններին...

Հիմա Օրմանեանին երկու ճանապարհ է մնում՝ կամ այդ ձեւով հրաժարվել, կամ կտրուկ դիրք բռնել դէպի թիւրք կառավարութիւնը և մնալ Պատրիարքական աթոռի վրա։ Երկու դէպքում էլ հայ ժողովրդը մի զգալի օգուտ չը պէտք է ունենայ։ Բայց գոնէ մեր ազգային արժանապատուութիւնը իրեն վայել բարձրութեան վրա կը մնայ, և լուսաւոր մարդկութիւնը կրկին կը համոզվի որ հայի վիճակը միշտ նոյնը է և նա՝ երբէք չէ կարող հաշտվել Թուրքի հետ։

Իսկ մնացածն էլ ինքը ժողովուրդ կանէ...

ՎԱՐԴՈ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 6 Սեպտեմբեր

Օ՛խ, հանդստացա՞ք, սիրտերնիդ տեղը եկա՞ւ... իշտէ Օրմանեան հրաժարական տուաւ։ «Ա՜խ, այդ Դրօշակն ու Շարժումը... Ի՞նչ կուզեն ինձմէ. ինչո՞ւ ձիերը պայտած հետաքս կը պնդեն՝ կը մտածէ Օրմանեան...

Մարդու հաւատալը չգար. էֆենտին, փաշան, սոսկ փոլիս քոմիսարը պատրիարքական վեղարով մը միայն՝ և հրաժարա՞կ... խելքի մօտիկ չէ։ Բայց փաստ է, կատարուած իրողութիւն։

Ուրախանալու չէ սակայն։ Գաղտնիքը խիստ պարզ է։

Թշուառական Օրմանեան աղէկ համոզուած է որ «հայրախնամ Համիտը» չի ընդունիր իր «որդիական» հրաժարականը... կը մերժէ, քիչ մըն ալ դեղին ոսկիներ նետելով իր (Օրմանեանի) որկորը։ Իսկ «ոսկի հորթը» Օրմանեանի Աստուածն է՝ անոր միակ սրբութիւնը։

Օ՜, ճարպիկ աղուէս. խաղ մը կը խաղայ, մէկ հարուածով կուզէ երկու նապաստակ գետին գլորել։ Մէկ նապաստակը անելեզու, անբերան տաճկահայն է, որու աչքը փոշի կուզէ փըչել—«տես հրաժարեցայ, աղգիս շահը մտածեցի, ան իմ անձնական փառքէս վեր դասեցի»... մէկալ նապաստակը դեղին մեսաղն է։ Եւ իր կոտրած անունը բարձրացնել և վեհափառ գլաղանէն պարգեւ ստանալ իր տեղը մնալու համար։

Վայ, սատանա՞յ Օրմանեան։

* * *

«Եամա՞ն, աղա, ես կաթոլիկ եմ... Ամէնուն ծանօթ է այս բացագանչութիւնը»։ Կաթոլիկ եմ, ֆրանկ եմ, կը պոռային հայ կաթոլիկները, կարծելով, թէ՝ հայ ըլլալէ դադրած ու Թուրքի ցասումէն ազատած պիտի ըլլան ատով. խե՜ղճ, ողորմելի արարածներ...

Սա ամբոխն է, տգէտ, իսկապէս ողորմելի ամբոխը. ան չի հասկնար իր ըրածը... իսկ ՀՆդոյեանները, Ազարեանները, Էմմանուէլեանները, Արփիարեան եպիսկոպոսները, վերապատուելիները... ցա՜ւ է ըսել՝ անոնցմէ շատերը նոյնիսկ Մխիթարեան ուխտէն... Արժանաւոր Մխիթար Սեբաստացու անարժան հետեւորդները...

Հայ կաթոլիկ քահանաները, եպիսկոպոսները ու վերապատուելիներն են այդ ողորմելի, աղտոտ ու հայակործան գաղափարն ամբոխի մէջ ներշնչողները... Մխիթարեան վանքերէն ելածները բրօբագանտի սաներու յար և նման, առանց մազ մը տարբերութեան։

Բայց փաստերու երկաթէ տրամաբանութիւնը ՀՆարդ փշուր ըրեր է ու կընէ այդ աղտոտ գաղափարը։

Ասկէ հաղիւ երկու շաբաթ առաջ Պաթումէն Աստրիական նաւը կը մտնեն երեք հոգի հայ-կաթոլիկ կիներ։ Խեղճ կիները երեք ամիս առաջ օրինական անցագրով մեկնած են Պաթում Տրապիզոնէն, իրենց զաւակներուն ու աղգականներուն այցելելու և վերադառնալու։ Անոնք համոզուած են եղած որ, ըլլալով «քալիկ» և ոչ «հայ» ամէն թրքական վտանգէ ազատ են։ Բայց երբ վերադարձին երեք կիները կը հասնին Տրապիզոնի առաջը՝ Համիտի որսկաններու ցասումը կը պայթի, դուրս չեն թողներ, նաւ կը վերադարձուցնեն։

Ամէն միջնորդութիւն, լաց ու աղերս իզուր կանցնի։ Կուգան Կիրասոն, Սամսոն, Ինեպոլի և. և. ոչ մէկ տեղ ներս կնդունին... կոտրա՞ծ սրտով կը դառնան նորէն Պաթում։ Փառք Աստուծոյ ճերմակ Զարի մարդերը ներս կնդունին՝ չեն թողներ «երեր-

եալ և տատանեալ» . . . ան ալ ոչ ցամաքի վրայ Կայէնի պէս՝ այլ ջուրի վրայ։

«Աղա, հայ չեմ, կաթոլիկ եմ» . . . պոռացէք հիմա ալ, հայ կաթոլիկ սրբազան հայրեր . . . Թուրքի համար դուք հայ էք «տէօվլէթի խային» . . . խելքերնիդ գլուխնիդ ժողուեցէք, հայութեան փրկութեան գործակից եղէ՛ք. եթէ մաղ մը տրամաբանութիւն մնացեր է ասուածաբանութենէ փտած ուղեղներնուդ մէջ և կաթիլ մը ազգային ու մարդկային զգացում ձեր քարացած սրտերուն մէջ։

ԲԱԺ

Պասպոն, 3 Սեպ.

Վերջին թղթակցութիւններս «Շարժումի» մէջ երեւնալէն ի վեր Սարաճեանի անճարակ փաստաբանները դուրս թափեցան «Տիգրիսի» մէջ, և փոխանակ գրածներս հերքելու անուանս շուրջ կը գառնան։ Ժամանակեան անուն մէկը «Լէօի» ով ըլլալը կուզէ յայտնել . . . մոռնալով թէ ըրածը տեսակ մը մատնութիւն է։ Ուրիշ անձ մը «Դիտողի» ստորագրութեամբ կը բողոքէ որ «Լէօ» կը ստորագրեմ. վասնզի «Մշակի» աշխատակցին անունն ալ «Լէօ» է։ Զարմանալի բան երկու տարիէ ի վեր «Շարժումի» մէջ «Լէօ» անունով գրած եմ ու «Դիտողը» միայն այսօր երեւան կուգայ բողոքելու . . . վասն զի իր կազմակերպութեան ալ թերութիւնները հարուածեցի։

Խնդիրը հոս չէ. Պ. Դիտողի իր պատուելիական աչքերը գոց դիտած է խնդիրները և կը չանայ ըսածներս սխալ հանել։ Կուզէ հաւատացնել թէ Սարաճեան իրեն յանձնուած հանգանակութիւնը կատարած է և արդիւնքը նպատակին ղրկուած։ Մինչդեռ իմ թղթակցութիւնը «Շարժումի» մէջ երեւան գալէն վերջ հանգանակութեան սկսեց Փրովիդենսի մէջ որ տակաւին կը շարունակուի։ Իսկ Նիւ Եօրք, Ուստր, Պոսդոն և շրջակայք և ոչ մի հանգանակութիւն եղած է։ Պ. Դիտողի նոյնպէս կուզէ հերքել այն լուրը թէ «Հայրենիք» թերթի խումբը թատերական ներկայացում մը տուաւ ի նպաստ Վանի գովելոց. կը թելադրեմ Դիտողը որ աչքերը մի քիչ լայն բանայ հասկնալու համար թէ՝ Նիւ Եօրքի թատերական խումբը որոնցմէ կազմուած է և ով կազմած է։

«Տիգրիս» թերթն ալ կանանց խօսելու խնդրոյ առթիւ փասը հատած փաստաբանի նման կողմնակի կռուել սկսեց և, ամէնէն գէշը . . . անվայել լեզուով։ Ամէն ոք զարմացաւ «Տիգրիսի» տգայամտութեան. բայց կը դուշակէինք թէ գաղտնիք մը կայ տակը որ «Տիգրիսի» ջինկոն այսքան թեթեւ կը թռչի։ Դիպուածով վերակազմեալ հնչակեանց նահանգային վարչութեան վերջին նստի օրակարգը ձեռքս անցաւ որմէ հասկցայ «Տիգրիսի» քաջասրտութեան ! գաղտնիքը։ Օրակարգի խնդիրներէն մէկն էր «Մարտ և Տիգրիս թերթեր պահելու միջոցներ». է՛հ, «Տիգրիս», իրենց պաշտօնական օրգանի կարգը դասած էր նահանգային վարչութիւնը. ջինկո խմբագիրը ալ որմէ վախ ունէր, հարկաւ քաջասրտութիւն կունենար . . . հայհոյելու։

Վերջապէս մրոտած թերթը իր անունը փոխելով ուզեց քաւել յանցանքները առանց ի նկատի առնելու թէ անուան մէջ ոչինչ կայ։ Այժմ «Տիգրիս» փոխուեցաւ «Ձայն Հայրենեացի» որոյ ուղղութիւնը պիտի ըլլայ կղերի ոտքերուն պատուանդան ըլլալ . . . կը թելադրէի որ փոխէին անունը և «Ձայն կղերայ» դնէին։

Սարաճեան ոտքով գլխով կաշխատի այս անդոյն թերթի համար և կրսուի թէ ինք ալ բաժնեսէր է թերթի ընկերութեան։

Հնչակեաններու օրակարգէն կը հասկնամ թէ կրկին Արփիար կռուած է իրենց մէկ կարեւոր անձնաւորութեան հետ։ Հոս կը խօսուի թէ «Տիգրիսի» ջինկոն պիտի ղրկեն որ այս խնդիրը քննէ և զիրենք հաշտեցուցնէ։ Ու մենք ուրախ ենք որ ատեն մը դէթ պղծուած դրութիւններ կարգալու ձանձրոյթը չպիտի ունենանք։

ԼԷՕ

Պուրկազ, 3 Սեպտ.

Ամսոյս 1ին երեկոյեան ժամը 8½ին, սրճարանի մը մէջ, 15 հոգիներէ բաղկացեալ ժողով մը կըլլայ, օղիի շիշերու շուրջ բոլորած՝ ողելից ըմպելիքի ազդեցութեան տակ վերջնական որոշում մը տալու հացկատակ գաստաուն այս տարի եւս իր պաշտօնին մէջ պահելու առթիւ։

Շնորհիւ խաչագողի գրպանին, արբեցութիւնը մէկ երկու ժամուայ մէջ կը յառաջանայ։ Արբած ժողովականք մարդկութենէ բոլորովին ելած կսկսին խօսիլ ու երեւակայել՝ այսպէս։

. . . Ձավուշներէն մէկը պարծենալով. «ես ձավուշ մը եմ 50—60 մարդ իմ տրամադրութեանս ներքեւ կը գտնուին, ո՞վ կարող է դաստաուն պաշտօնէ հեռացնել, քանի որ այսօր Պուրկազ երեք բեռնակիր ձավուշներէն կախում ունի»։

Միւս մը այն կողմէն ելլելով կսկսի ինքնակոչ հոգաբարձուներուն ճառել թէ՝ ձեր կողմը բռնելով, աշխատեցանք սվաճիներ, պէրպէրներ, հոգաբարձու կարգել, որպէս զի՝ դաստաուն այսաեղ մնայ, այնպէս չէ՞, Գիրգոր և Յակոբ աղաներ։ «Էվվէթ էօյլէ տիր, պու կիւն, պու ազշամ իշի պիթիրմէյէ պօրճլույըզ»։

Իսկ երրորդ մը դուրս գալով կսկսի արտադրել որպէս թէ՝ «արդէն դաստաուն՝ դաստաու է, ո՛չ ոք իրաւունք ունի առարկութիւն ընելու, այլ պէտք է քահանան հեռացնել՝ այդ եւս մեր կամքէն կախեալ է քանի որ մենք ձավուշներ ենք, միթէ այդքան աղդեցութիւն չպիտի կրնամք բանեցուցնել. երբ այդքան բան ալ չենք կրնար ընել, այլեւս ինչ ձավուշութիւն է»։ Ահա այսպէս ինքնակոչ հոգաբարձու և ձավուշներու խեղկատակ դերակատարութիւններ կը շարունակուին ժամերով, և առանց եզրակացութեանմը յանգելու կը ցրուին։

Յետպտ. 1էն սկսեալ Պուլկարաց, Յունաց դպրոցները բացուեցան, բայց մերը դեռ բացուած չըլլալէ ի զատ՝ բացուելու ալ ո՛չ յոյս կայ ո՛չ լոյս և ոչ իսկ խօսք. շնորհիւ սերմնաքաղ խռովարար այլ յառաջդիմասէր։։։ պարոնին, դպրոցական տղաներ փողոցներու մէջ կը շրջին. նկատողութեան առնող չկայ. նորընտիր թաղական խորհուրդը կուզէ բան մը ընել, և վերջ տալ դպրոցի սոյն անկերպարան վիճակին, բայց արդելք կը հանդիսական ատոնց ջանքերուն, և լրագրութիւնք Պուրկազի մասին դեռ եւս լռութիւն կը պահեն։

Պուլկարիոյ ամէն քաղաքներու մէջ թաղական և հոգաբարձական խնդիրներ ծագեցան և տակաւ իրենց լուծումը ստացան, դժբախտաբար Պուրկազն է որ տակաւին ալեկոծեալ ծովի նման յուզման և խռովութեան մէջ կը գտնուի, շնորհիւ քանի մը բախտախնդիր անձերու, որոնք իրենց շահերն ազգային շահերէն վեր կը դերադասեն։

Արդէն ձավուշ ըսուածներն իրենց վարուց և բարուց ապականութեամբ վարկերնին կորսնցուցած են ժողովրդեան մէջ, ատոնք ամէն խուլ անկիւններու մէջ ժողովներ կընեն իրենց պաշտելի խաչագող դաստաուն պաշտպանելու, և ներկայ տարուայ համար կրկին դաստաու կարգելու տենչով. արտաքոց գաղափարներ կը յղանան, առանց ի նկատի առնելու կրթական նախարարներութեան օրէնքը՝ որ եթէ երբէք դաստաու մը բարոյական տեսակէտով յանցանք իսկ չունենայ, լոկ մէկ կամ երկու անգամ կռուոյ բռնուելով, այլեւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՃԿԱՀԱՅ ՔՐՈՆԻԿ

Տրապիզօն, Կարին, Մուշ

Երրորդ նամակն որ կը յղեմ Շարժումի տեղեկութիւններ տալու հոս արգիլուած հեգ հայաստանցիներու թշուառ վիճակի մասին։ Ալ յոյսերնիս կտրեցաւ. 150ի չափ անձեր անօթի ծարաւ մաշեցան պանդոկներու մէջ չոր տախտակներու վրայ պառկելով։ Մեծամասնութիւնը արդէն հիւանդացած է, ոչ հիւանդանոց կայ եւ ոչ ալ տեղւոյս հայերը հոգ կը առնին. կը կորսուինք. մինչեւ հիմա խել մը ջոջեր յոյսերնին դրած էին օգոստոս 19ի վրայ. իրատէի կըսպասէին, բայց 19, 20 ալ անցաւ եւ 30ը եկաւ ուրան մը չկայ։ Արդէն գրած էի որ տեղւոյս կուսակալը յայտարարեց թէ՝ երկիր չէ կարելի երթալ, հիմայ վերջնականապէս հրամայած է իրեն չը դիմել, հակառակ պարագային բանտարկելու սպառնալիքով։ Այս հրամանէն վերջ 14 անձ գրուեցան Պուլկարիա երթալու, 8ը Ռումանիա, 6ը Իզմիր, 3ը Տէպէ-Աղաճ եւ 9ը Պէյրութ։ Այս 40 անձերը առաջնորդէն վկայական առնելով գացին նուփուզ նազիրէն անցագիր առնելու եւ նա սատակ ուզեց. տմէն տեղի համար առանձին գին նշանակելով 50—10 ղրուշ։ Իսկոյն դիմեցինք առաջնորդին՝ բայց ինչ կարող է ընել առաջնորդը, 1—2 մարդ չէ որ դրամը տայ եւ գործերնին կարգադրէ, այլ 150 մարդ. եթէ մէկուն տայ, ամէնքն ալ պիտի ուզեն. այդ է սովորութիւնը մեր չինականին։ Վերջ ի վերջոյ ստիպուեցանք կրկին մնալ. երեք հանրագիր ղրկած ենք Պատրիարքարան, բան մը չկայ. միայն անցեալ օր Պատրիարքարանէն հրաման եկաւ բոլոր մարդկանց ցանկը պատրաստել, աւելցնելով նաեւ թէ ուրկէ կուգան, ուրտեղացի են եւ ուր պիտի երթան. Այդ բոլորը գրուեցաւ, բայց դեռ բանմը չը հասկցանք։

Քանի մը հոգի իրենց հանդերձները ծախեցին, անցագիր առին Իզմիր երթալու. բայց նաւը մինչեւ Պօլիս կը տանի. առաջնորդը վայրին դիմեց եւ հրաման ստացաւ մինչեւ Իզմիր ղրկելու, բայց եւ այնպէս Պօլիս իջնալու եւ օտար նաւով երթալու պայմանաւ։ Նաւապետը մեզ յայտնեց որ չերթանք, որովհետեւ Պօլիս զմեզ կը բանտարկեն. բայց աղայքը չազդուեցան. չորս հոգին վճռեցին ճամբայ իյնալ եւ երբ նաւահանգիստ իջան քննութեան ենթարկուեցան եւ խուզարկուեցան։ Խուլթեցի Թոմաս Սարգիսեանը եւ դարձուցին, իսկ միւս երեքը գնացին։ Այս շաբթու ալ 8—9 անձ եւս պիտի երթան։

Անցեալ օր 5 տղայ աւստրիական նաւով Ամերիկայէն եկան, 3 օր նաւահանգիստ մնացին, ներս մտնել չը թողուցին։ Անցուդարձը բոլորովին արգիլուած է։

Մշոյ ասաջնորդը հոս եկաւ. գացինք իրեն տեսութեան. սեպ. 2ին Մուշ պիտի երթայ։

Տեղւոյս թշուառները օգնութիւն կըսպասեն։ Թո՛ղ չը զլացուի այդ օգնութիւնը։ Տրապիզոնի առաջնորդ եւ ժողովուրդը քարասիրա են։ Կեցցեն Պաթումի ազգայինք. 80 րուպի մեզ ղրկեցին, եւ մինչեւ օրս ապրեցանք այդ դրամով։ Բայց 150 մարդ այդքան դրամով ի՞նչ կրնայ ընել։

* * *

չկրնար դասատուական պաշտօնի գլուխ անցնիլ. մինչդեռ այդ աբարածը, իր գործած զեղծումներն մէկ կողմ թողլով, չորս անգամ եղաւ որ փողոցի մէջ կը ծեծէ կը ծեծկուի խայտառակաբար, և առանց ամչնալու ամէն տեսակ միջոցներու դիմելով կը ձգտի դասատու ըլլալ տակաւին և Պուրկաղ խռովութեան մէջ պահել. Ցայտ է թէ պղտոր ջուրին մէջ ալէկ ձուկ կորսցուի։

Ցիշեալ խաչագողը իր գոյութեան պահպանումը միմիայն Արմենական ըսուած մի քանի մարդոց մէջ կը գտնէ, և այդ չնչին զօրութեան կրթնած ամէն ճիգ կը թափէ թթում գլուխ չաւուշներն երեւակայական կուսակցութեան մէջ պահելու, և իրեն զօրաւիգ ընելու։ Ինչպէս որ այդ անուամբ յաջողեցաւ ամբողջ մէկ տարի Պուրկաղը շահագործել, այս տարի ալ նոր մեթոտով մը կուզէ կրկին պաշտօնավարելով շահագործել. չնորհիւ իր նման կեղծարարի մը որ Ֆիլիպէէն տեսս եկած է և մի քանի օրէ ի վեր հոս կը գտնուի։

Տարաձայնութիւն մը եւս կայ թէ «Ս.Բրիարականներ և Արմենականներ կը միանան», այդ պատճառաւ երեք չաւուշներու միջ ոգեւորութիւն մը տիրած է. իրենց մէջ իրարանցում մը կայ, արդիւնքը շատ պարզ է. դպրոցը անկերպարան վիճակի մէջ պիտի մնայ. ո՛վ գիտէ թէ քանի շաբաթներ՝ կամ թէ քանի ամիսներ և այդ միացումը օդին մէջ պիտի ցնդի և դպրոցը զոհ պիտի լինի այդ խայտառակութեան։

Միացման դաղափարի տարաձայնութենէն անմիջապէս յետոյ կուգայ Հայաստանի ապստամբութեան խնդիրը, այսինքն ժողովականաց ցնդած դաղափարաւ, պէտք է հոս Պուրկաղի մէջ Արմենո-Ս.Բրիարական կուսակցութեան կեդրոն ընելով ոյժ տալ և յետոյ չգիտեմ ոք տարին.՝.՝.՝ 2,000 ղինուոր ղրկել ռազմամթերքով և սահմանագլխէն ներս մտնելով հայրենեաց հողերուն վրայ ապստամբութիւն ընել. վա՜յ այդ աղայական դաղափարը յղացող յեղափոխական չոր գլուխ Արմենական դասատուի՞ն, և վա՜յ հաւատացող հայուն։

Ալ ձեզի պէս առաջնորդներ եթէ
աղդը ունենայ
Եկող տարի դարնան ազատութիւն
կը գտնայ։

Դիտող

ՎԱՌՆԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

—

Վառնայի ներկայ ուսուցչական խմբի մասին տեղական թերթերը գովասանքներ են շռայլում։ Մենք լսել ենք որ հոդաբարձութիւնը նոր ուսուցիչներին ժամանակաւորապէս է հրաւիրել, և եթէ համոզվի որ այդ ուսուցիչները չեն համապատասխանում իրանց կոչման՝ պէտք է արձակէ։ Եթէ ճիշդ է, հոդաբարձութիւնը շատ խելացի կերպով է վարվել։

Դպրոցները պէտք է միշտ ազատ պահել անորակելի անձնաւորութիւններից։ Ուսուցիչներից որը որ իր վրա առնի մեր ակնարկութիւնները, կարող է գալ մեզնից բացատրութիւն պահանջել, եթէ բարեհաճի։

Խմբագրութիւն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

«Իրաւունք»ի 64թուոյն մէջ, Վառնայի թաղականութիւնը խորագրին տակ Յ. Գ. ստորագրութեամբ նախայօդուածը կարդացի։ Այսօր Վառնայի մէջ բնակող ամէն մի հայ գիտէ թէ, Վառնայի թաղ. խորհուրդարանը դրեթէ տարիէ մը ի վեր թափուր կը մնայ, սակայն, դուցէ ժողովրդին մեծամասնութիւնը չը գիտեր թէ, որոնք եւ ի՞նչ արգելքներ պատճառ եղած են, սոյն կարեւոր մարմնոյն ընտրութեան յապաղման մինչեւ ցարդ։ Ճիշդ է ժողովուրդի մէջ գտնուեցան ազգային գործերուն եւ եկեղեցւոյ պայծառութեան նախանձախնդիր անհատներ, որոնք անկեղծօրէն աշխատեցան ժամ առաջ թաղ. խորհրդոյ ընտրութեան ձեռնարկել, սակայն ցաւ է ինձ ըսել թէ, մի քանի հաճը աղաներ, իրենց փոքրիկ փառասիրութեանց եւ անձնական հաշիւներուն համար, ձգձգեցին մինչեւ օրս յիշեալ խորհուրդին կազմուիլը, որուն մէջ բաւական դեր խաղաց նոյնինքն «Իրաւունք»ի Պ. խմբագիրը. հոս տեղն է հարցունել, «Իրաւունք»ի Պ. խմբագրին թէ եթէ անկեղծ էր ինչո՞ւ համար այսչափ ժամանակէ ի վեր Զաքարիական լռութիւն պահեց, եւ այսօր հրապարակ կը նետէ սոյն ամենակարեւոր խնդիրը։ Չէ Պ. խմբագիր չէ. ձեր կարծածին չափ միամիտ չէ ժողովուրդը՝ նա գիտէր եւ շատ լաւ գիտէր որ դուք լռելու մէկէ աւելի պատճառներ եւ հաշիւներ ունէիք. ալ պէտք է հրճուիք. ձեր ուզած անձնաւորութիւնները կրկին հոդաբարձու ընտրուեցան. նոյն հոդաբարձուները անցեալ տարուան անշահ եւ ապիկար դասատուներուն ճամբայ տալով (*) ալ աւելի կարող եւ ձեռընհաս դասատուներով պիտի օժտէ եւ օժտելու վրայ է եղեր ազգային վարժարանը, ինչպէս որ կուխտէիք. ըսել է թէ պղտիկ յաղթանակ չէ... Բայց նոր սերունդը պիտի տուժէ ատ ալ բան մը չէ. արդէն մէկը պէտք է լայ որ միւսը խնդայ. չէ մի որ այս է աշխարհի օրէնքը. սակայն այս մասին կրկին կը տեսնուինք ձեզի հետ։ Թող ներողամիտ ըլլայ ընթերցողը որ բուն խնդրէն շեղեցանք. բայց որովհետեւ բուն խնդրին հետ մեծ առնչութիւն ունէին այս պարագաները անոր համար այս բացատրութիւնները տալու ստիպուեցանք։ Ինչպէս որ գիտէք ամէն արդիւնք պատճառ մը ունի. արդ թաղ. խորհրդոյ ընտրութեան յետաձգուելուն բուն պատճառը հոդաբարձական խնդիրն էր։

Դալով ձեր հանդանակիչ մասնախումբին ուղղած հարցումին, յիշեալ մասնախումբի անդամներէն մին կուգամ ձեր հարցումին պէտք եղած բացատրութիւնը տալ «Ի՞նչ ըրիք պարոններ. երեք շաբաթէ ի վեր քանի ֆրանք հաւաքեցիք. ձեր գիմումներէն ի՞նչ արդիւնք եւ ի՞նչ պատասխան ստացաք. ազգային գանձինը պիտի ազատի՞. բայց ձեր լռութիւնը կը մատնէ, չէք յաջողած. եթէ չէք յաջողած պէտք է հրապարակաւ պարզէք թէ ի՞նչ արգելքներու հանդիպած էք, որպէսզի ժողովուրդն ալ իրողութիւնը իմանայ եւ իր գլխուն ճարը մտածէ»։

Ահաւասիկ համառօտիւ պատմենք թէ՝ ի՞նչ արգելքներու հանդիպեցանք եւ որոնց կողմանէ. արդէն գիտէք որ սոյն պարտքը անցեալ տարուանէ դպրոցին չինութենէն մնացած է, որուն հանդանակութեան սիրայօժար մասնակցած էին թէ տեղացի եւ թէ գաղթական վառնայաբնակ բոլոր հայերը, ի բացառեալ մի քանի հարուստ եւ մեծ աղա կարծուած անձնաւորութիւններ՝ որոնք պէտք էին իրենց դիրքին եւ հարստութեան համապատասխանող առատաձեռնութեամբ, ամէնուն բարի օրինակ եւ առաջնորդ հանդիսանային։ Պահ մը ենթադրելու միտումը ունեցանք թէ զիրենք պահեստի պահած էին. սակայն հոգ չէր. այդ ժամանակ որ չէին տուած հիմա բուն առիթն ժամանակն էր, պէտք էր որ իրենց առատաձեռնութիւնը ցուցունէին, սակայն կրկին յուսախաբութիւն։

Մեծարգոյ անդամակիցներուս հետ ամբողջ երկու օր պտտելով հազիւ կարող եղանք 150 ֆրանքի չնչին մի գումար հաւաքել։ Այսպէս անյաջողութեան բաղխելնուս բուն պատճառը՝ շատերը սա իրաւացի առարկութիւնը կընէին՝ այսինքն թէ քաղաքին ամենէն ունեւոր դասակարգին պատկանող, այսինչ եւ այնինչ անձնաւորութիւնները դեռ սանդիմ մը իսկ չեն տուած, նառաջ անոնք պէտք է տան. իսկ մենք կրկին պատրաստ եմք մեր կարողութեան ներածին չափ սիրայօժար տալու։

Ցարգոյ պաշտօնակիցներուս հետ, շատերուն կողմէ եղած այս իրաւացի առարկութիւնը եւ դիտողութիւնները ի նկատի առնելով, մենք մեր մէջ դրամ չը տուած յիշեալ անձերուն կարողութեան համեմատ, ցուցակ մը շինեցինք, որուն գումարը հազար ֆրանքի հասաւ, եւ այսպէս ժողովրդին իրաւացի առարկութեան հետ իրենց հաղորդեցինք որ, եթէ դուք այս հազար ֆրանքը տալու

(*) Ներկայ հոդաբարձութիւնը անցեալ տարուայ ուսուցչական խմբէն միայն մէկը չէր ընդունած, Պ. Վահան Մանուէլեանն. իսկ Վ. Շահրիման եւ Պ. Պիօնեան կրկին հրաւիրուած էին. բայց անոնք, իրենց արժանաւոր ընկերը չը զոհելու համար՝ նոյնիսկ բարոյական զոհողութիւն յանձն առնելով հեռացան։ Բացարձակ ճշմարտութիւն է որ ներկայ ուսուցչական խումբը, բացի Պ. Պոնճուկեանէ, չէ կարող համեմատուիլ անցեալ տարուայ խմբի հետ, որքան գովեստներ չռայլուին ասնորերուն։

Ծ. Խ

Կարնոյ բանտին մէջ այսօր կը գտնուին 20 հայ երիտասարդներ. մի քանին ուսեալ՝ որոնք բանտարկուած են իբր քաղաքական յանցաւորներ։ Ասոնցմէ 8ը դատապարտուած են 101 տարուան, 4 Բասենցի 3 Նարմանցի եւ մէկ Կարնեցի, յայտնի Թաթուլը։ Մէկ հոգի Խնուսի Ս. Բոս գիւղէն Զ. Պարոնեան դատապարտուած է 15 տարուան. 5 հոգի 10 տարուան. Մշեցի Մելոյ, Կարնեցի Գարեգին, 3 Ծեթանոզցի. Կիւրէղ. Սեբէրակ Բոփալեան, Մեսրոպ Ինդրեան, Յական տարի։ 4 հոգի, 2 հոգի 5ական տարի եւ 2 ալ 8ական։ Այս քսան հոգիի մէջ կան եւ երկու հոգի որ 11 ամիս է բանտարկուած են առանց վճռի. Հեղէցի Պողոս Գրիգորեան եւ միւսը Ալաշկերտցի տղայ մը։

Այս քսան տղաքներու հետ 15 օր ապրեցայ Կարնոյ Թաշխանէի բանտը. քնացայ անոնց անկողիններու մէջ։ Շատ խեղճ վիճակի մէջ են, միայն օրական 300 տրամ հաց ունին եւ առատ ջուր։ Բանտը խստութեամբ կը հսկուի, միայն տանիքի վրայ 28 ժանտարմ կայ։ Բանտին մէջ 600 բանտարկեալներ կան. ամենէն զուարթը դարձեալ հայ բանտարկեալները են։ Հոն գտնուած միջոցիս Մշեցի Մինասի եւ իր ընկերներուն տաս տարուան դատավճիռ եկաւ. 5 տղաքները դուրս հանեցին եւ վիզերնին չուան ձգած քաղաքի փողոցները պտտցուցին, եւ «նորէն բանտ բերին»։ Այս հինգ տղան՝ վերջը ոտքերնին 6 օկկայ շղթայով, շրջապատուած 30 զինուորներով ուրախ ուրախ գացին իրենց ճակատագրին որոշումը կատարելու։

Այս 20 անձանց բանտարկութեան պատճառը Ծիթանոզցի Յարութիւն Յովհաննէսեանն է, որ երեք տարի առաջ 70 օր բանտը մնալով մատնեց բոլոր տղայքը։ Զինքը փախուցին, հիմա Ղարսի կողմերը կապրի։

* * *

Եփրատ գետի եզերքովը Ս. Կարապետի վանքէն սկսեալ մինչեւ Զուխուր՝ երկիրը սարսափելի տանջանքի եւ նեղութեան մէջ է։ Անցուդարձը բոլորովին խզուած է. Ցրոնք աւարի առնուած է, 14 հոգի եւ երկու քահանայ Մուշ քաղաքին մէջ բանտարկուած են։ Աւարի առնուած են նաեւ Աղքան եւ Ալիճան գիւղերը։ Շէխպրեմ գիւղը ազատած է Եաքուտ աղայի եւ քէլ Յուսէյնի չնորհիւ։ Հացի պակասութիւնը շատ է. գիւղերը կրկնապատիկ եւ եռապատիկ գիներով ծախուած են միւլթէզիմներուն։ Մշէն Սասուն տուրքը հաւաքելու կերպայ զապթիէ մը. զանի գաղտնի կերպով կըսպանեն։ Կառավարութիւնը կըսէ թէ յեղափոխականները սպանած են. չարչարանք եւ չքաւորութիւնը չափազանց է։ Շէխլան, Բէրդմէրտան, Ղզլաղաճ եւ Ղաղբար Պարկանցի աշիրաթներէն կը պաշտպանուին։

Ս. Յովհաննու Առաքել եւ Մկրտիչ վարդապետները վախերնուն 36 դպրոցական աշակերտ եւ 12 միաբան դուրս քշած են քաղաքէն, ապրիլ ամսոյն։ Հիմա իրենք կը վայելեն 300 ոչխարներու եւ 30 մատակաց սերն ու կաթը։ Տեսնենք թէ Մշոյ առաջնորդ որ տեղ հասնի ինչ պիտի ընէ. արդեօք ան ալ Տրապիզոնի Խոսրով վրդ. ընթացքով պիտի երթայ միջակ կերպով. կատուի պէս ճանկերուն վրայ քալելով։

ՍԱԼՕՐ

Տրապիզոն. 30 Օգոստ.

——).(——

ըլլաք, մենք պատրաստ ենք, ստանձնելու մնացեալ հազարաչափ ֆրանքը. ուստի մեր այս որոշումը գործադրելու համար, հետեւեալ օրը այսինչ տեղ ժողով մը գումարել որոշեցինք. սակայն ցաւ ի սիրտ կըսեմ թէ միայն 3 հոգի եկած էին յիշեալ ժողովին, եւ դժուար չէ գուշակել թէ այդ 3 հոգին ալ առաջուանէ դրամ տուող դասակարգին կը պատկանէին. այսպէս ուրեմն, երբ խնդիրը «բժժժ»ը կախելու, այսինքն դրամը տալու վրայ էր, մարդ չգտանք շուրջերնիս։ Ահաւասիկ թէ ինչ դժուարութեանց հանդիպեցանք եւ որոնց կողմանէ. հիմա ժողովուրդը իրողութիւնը հասկընալով, թող իր գլխուն ճարը մտածէ, որն որ թէ իրենց եւ թէ ազգին պատիւը չշափող ամենափոքուկ խնդիր մըն է։

Իսկ գալով 150 ֆրանքին, անոնք տուողներուն պիտի ետ դարձուին։

Ց. Թ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայոց Պատրիարքը հայ ազգի անտանելի վիճակին մասին զեկուցագիր մը տուեր է Սուլթանին այդ վիճակին բարելաւումը պահանջելով։

Պատրիարքը բերանացի աւելցուցեր է թէ ինքը իր ազգին առջեւ վարկաբեկ եղած է, ուստի թէ Ազգային ժողովը և թէ ինքը վերջնականապէս որոշած են իրենց հրաժարականը տալ, եթէ Սուլթանը չը համաձայնի արդէն առաջուց եղած պահանջներուն բաւականութիւն տալ։

Թան

ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԲՈՒՂՂԱՐԻԱՑՈՒՄ

—

Մասնաւոր վարժարանների գոյութիւնը նպաստում է ազգային վարժարանների յառաջդիմութեանը. որովհետեւ նրանց վարիչ մարմինները ճիգ են թափում լաւ ծրագիրներ կազմել, աւելի լաւ մէթոտներ գործածել որպէսզի կարողանան մրցել աւելի աժան գնով ուսում տուող ազգային վարժարանների հետ։ Իսկ ազգային վարժարանների վարիչները տեսնելով մասնաւոր վարժարանների առաւելութիւնները, բարի մրցման զգացմունքից դրդուած՝ աշխատում են իրանց յանձնուած դըպրոցները մտաւորապէս և բարոյապէս հաւասարեցնել կամ գերազանցել մրցող մասնաւոր վարժարաններից։

* * *

Բայց մրցման գործին նպաստում են միայն այն վարժարանները, որոնք իսկապէս ծառայում են իրանց նպատակին, չահադործական հիմնարկութիւններ չեն։ Դժբաղդաբար մենք տեսնում ենք որ այդ մասնաւոր հիմնարկութիւնները փոխանակ բարի մրցում մը ստեղծելու, աւելի ժողովրդի մէջ հակառակութիւն ծնեցընելու են ծառայում. թէ ազգային և թէ մասնաւոր դպրոցների ուսուցիչները անձնատուր եղած եսական գծուծ շահերին միմիանց առում են, սեւացնում. և ցաւալին այն է որ իրանց այդ ձգտումներին մասնակից են անում իրանց յանձնուած փոքրիկ մանուկներին, որոնց խելքից շատ վեր է զբաղել այդ տեսակ խնդիրներով։

Այսպէսով մատաղ սերունդը իր անպարտաճանաչ դաստիարակներից, դեռ մանուկ հասակից՝ ընտելանում է նախանձոտ բամբասանքի և չարախօսութեանց։

Հրաւիրում ենք թէ ազգային և թէ մասնաւոր վարժարանների ուշադրութեանը այս միանգամայն անբարոյական երեւոյթի վերայ, և խնդրում որ չանան վերջ տալ այս փողոցային սովորութիւններին։

Զմոռնամ չեշտել որ այն մասնաւոր վարժարանները, որոնք ստեղծուած են լոկ հաց ճարելու համար բոլորովին աւելորդ հիմնարկութիւններ են. նոյնքան աւելորդ են և այն ազգային վարժարանները որոնց մէջ մուտք են գտնում ոգէտ և անբարոյական ուսուցիչներ, լոկ ապրելու համար։

ՖԷՊԻՍ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Լաւ դիտեցէք չորս կողմիդ, Պ. Վահէ գիտէ՞ք արդեօք ասկից երեք տարիներ առաջ եկեղեցւոյն պատկանած կալուածոց հասոյթը...

Զեմուրանար Հոգաբարձութեան և թաղականութեան ջանքերը, բայց ամէն գովեստ սահման ունի, ոչ ձեր գրածին չափ փայլուն։ Կը հարցնէք ինձ թէ քարուկիր խանութներու շինութիւնը և ջաղացքի ապահովութիւնը միթէ անհամեմատ աշխատութեան արդիւնք են։

Այո, իրաւունք ունիք, ես ալ ձեզի հետ կըլլամ։ Բայց կը խնդրեմ, պարոն, ըսէք ինծի իրենց երեք տարուան պաշտօնավարութենէ միայն այսչափը պէտք էր սպասէինք, որը արդէն պատրաստ էր։ Այս բոլորը երեք ամսուան գործ էր, ո՞ւր մնաց երեք տարուան մնացորդ մասը։

Խնդրեմ ըսէք, այս երեք տարուան մէջ հոգաբարձութիւնը և թաղական խորհուրդը քանի անգամ կանոնաւոր ժողովներ ունեցան և ինչ արդիւնք ձեռք բերին։ Քանի անգամ վարժարան այցելեցին, և ինչ բարելաւութիւն ունեցան վարժարանիս։ Մինչեւ անգամ քննութեան ատեն իրենց բացակայութեամբ փայլեցան։

Եթէ հոգաբարձութիւնը ձեր գրուածին պէս հեռու անձնական հաշիւներէ կարելին ըրած ըլլային՝ 1897ի պիւտճէին նայելով այսօր ինքզինքնիս ուրախութենէ չը պիտի կարենայինք զսպել։ Մինչդեռ այսօր «էսքի համար, էսքի թաս» անգամ չենք կրնար ըսել։

Կարծեմ պէտք էր գոնէ այսչափը մատանիչ ընել, որ յաջորդներն ալ մեղ նաննիներով չը քնացնէին։

Ո՞ւր մնաց հին թաղականութեան հաշիւները, որոնք մօտ 200 ոսկիներ կը պարտին։

Ցի Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պալատական ութը ալպանացիներ, որոնք Գարատաղի սահմանագլխուն վրայ գտնուած Ալպանական ցեղերը գրգռած էին Գարատաղի մէջ խռովութիւն բարձրացնելու համար՝ Նիգոլա իշխանին Պոլիս գտնուած միջոցին, սեպտեմբեր մէկին Պոլսէն աքսորուած են։

— Միացեալ Նահանգներու պետական խորհրդականը քաղաքական անձի մը գրած նամակի մէջ հաստատեր է թէ Միացեալ Նահանգները, իրենց ազգական սովորութեան համեմատ, երբեք չպիտի դաշնակցին որեւէ եւրոպական պետութեան մը հետ։

— Սերպիոյ մէջ ձերբակալած պատական պետերը, Բաշիչ, Թուշանովիչ և Նիկոլիչ, ամենաեռանդուն կերպով կը մերժեն իրենց մասնակցութիւնը Միլանի դէմ եղած դաւադրութեանը և ինքզինքնին անպայման հաւատարիմ կը յայտարարեն Օպէրոնովիչների արքայական տան։

— Ս. Բեթերսպուրկէն կը հաղորդեն «Դէյլ Մէյլ» անգլիական թերթին թէ՝ ռուս կառավարութիւնը պաշտօնապէս բողոքած է անգլիական հիւպատոս Վոլֆին դէմ, որ ֆինլանտացիներուն ուժ տուած է Ռուսական իշխանութեան դէմ եղած գրգռումներուն մէջոցին։

— Թրանսվալի և Անգլիոյ միջև եղած դժգոհութիւնները հետզհետէ սուր կերպարանք կառնեն և կը կարծուի թէ պատերազմով վերջանան։

— Հոլանտական բարլամենտական ընկերվարականները սկսած են միթինկներ կազմել յօգուտ ընդհանուր ժարդկութեան յաւերը բառնալուն։

Արդէն քանի մը քաղաքներու մէջ տեղի ունեցած են այդ միթինկները։

— Վիէնայի «Ն.-Բրէս» թերթը յօդուած մը գրած է ոյն լուրերու առթիւ որոնք կը վերաբերէին Գարատաղի իշխանին Սուլթանին այցելութիւնը և Ռուսիոյ, Թուրքիոյ, Պուլկարիոյ, Յունաստանի և Գարատաղի մէջ կայմուելիք դաշնակցութեան ծրագրին։

Լրագիրը կը հաւատայ որ Գարատաղի իշխանը ինքնին կրնայ այդպիսի ծրագիր մը ունենալ, բայց ոչ Ռուսիոյ թելադրութեամբ։ Եւ կաւելցնէ թէ, այդ տեսակ միտք յաճախ կը յղացուի, բայց միշտ ցնորք կը մնայ, քանի որ Աւստրօ-Ռուսական համաձայնութիւնը գոյութիւն ունի։

Գարատաղը կրնայ իր անձնական շահերուն համեմատ դժգոհութիւն յարուցանել Սերպիոյ մէջ, բայց չը պիտի կրնայ Պալկանեան թերակղզիի խաղաղութիւնը վրդովուել, քանի որ Վիէննան և Բեթերսպուրկը կուզեն զայն պահել։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Փարիզ, Պ. Վահագ. — Այսօր փարիզեան հին թղթակցութիւնները աչքէ անցնելով, տեսայ ձեր մէկ թղթակցութիւնը, Փարիզի ծանօթ խնդրի մասին։ Այդ թղթակցութիւնը սատացուած է մեր բժցակայութեան ժամանակ. թէ ինչո՞ւ չէ տպագրուած չը գիտենք, թէեւ թղթակցութիւնը չը տպագրուելու ոչ մի պատճառ կայ։ Ներողութիւն։ Շարունակեցէք ձեր թղթակցութիւնները։

Ա Զ Դ

—

Մինաս Բարսեղեան, Ակնայ գիւղերէն, Հապուճէխցի, տարիքը 30, արհեստով ատաղձագործ, երկայնահասակ և թուխ դէմքով, Ռումանիոյ կամ Պուլկարիոյ մէջ ըլլալ կը կարծուի։ Հասցէն տեղեկութիւն ունեցողը թող հաղորդէ խմբագրութեանս։

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՒԱՏԱՐՈՅ

—

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 3 ֆլ. սոյն երգարանը կը ծախուի Վանա, Ա. Զարպհանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ դպրոցական եւ վիպական գրքեր. դրամի փոխարէն կընդունի նաեւ նամակադրոշմ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակադրոշմներու։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄԻ»

—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահաղդ, ինչպէս նաեւ պրոշիւռներ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻՆ

Печатвидъ „Взаимность“ Варна